ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՏՊ-Ն № 02/07/753-16

«16» 03 2016թ. N

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏՈՐ ԱՆԺԵԼԱ ՆՈՐԻԿՅԱՆԻՆ

Ք. ԵՐԵՎԱՆ, ԲՈՒԶԱՆԴԻ 1/3, 31 Շ., 4-ՐԴ ՀԱՐԿ

Հարգելի Անժելա Նորիկյան,

Ի պատասխան Ձեր ս.թ. մարտի 12-ի թիվ 271-ի 8 գրության, որը ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն է մուտքագրվել ս.թ. մարտի 15-ին՝ հայտնում ենք, որ ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունում ներկայումս քննարկվում է տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձի նշանակման հարցը:

ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարի մամուլի քարտուղարի հաստիքը ներկայումս թափուր է, սակայն քննարկման փուլում է գտնվում այդ հաստիքի՝ մոտ ժամանակներս զբաղեցման հարցը, որի արդյունքում այդ պաշտոնում նշանակված անձը կնշանակվի ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ և Ձեզ կտրամադրվի գրությամբ նշված ողջ տեղեկատվությունը:

Միևնույն ժամանակ հարկ ենք համարում նշել, որ ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունում տեղեկատվության ազատության

համար պատասխանատու պաշտոնատար անձի նշանակման գործընթացը քննարկման փուլում գտնվելու հանգամանքը որևէ կերպ չի խոչընդոտում ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության կողմից <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքով սահմանված պահանջների կատարմանը: Հետևաբար ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարությունը <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով ապահովում է տեղեկությունների մատչելիությունը և հրապարակայնությունը, պատասխանում է բոլոր հարցումներին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՍԵԴՐԱԿ ԲԱՐՍԵՂՅԱՆ

?????? ?????????

Կատարող՝ Արտակ Ղազարյան
Հեռ.՝ 011880803